# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Աշտարակ, Յանրապետության 4
հեռ. (032) 3 38 35

N 1957
17.11.2003թ

*Քաղաքացիական հասարակության կենտրոնի*
*նախագահ տիկին Ս. Ա. Ասլանյանին*

*Հարգելի տիկին Ասլանյան*

Անցած ինն ամիսների ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում Ձեր կենտրոնի և «Արագածոտնի կանանց և դեռահասների կենտրոն» Հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվում էր «Երիտասարդ կանանց առաջնորդության ինստիտուտ» ծրագիրը, որտեղ ուսանող 17-23 տարեկան, ծնողազուրկ, զոհված և վիրավոր ազատամարտիկների, փախստական ընտանիքների երիտասարդ աղջիկներին հնարավորություն տրվեց ստանալ մասնագիտական կրթություն, ինչի հնարավորությունից նրանք զրկված էին: Ծրագրով ստացած գիտելիքները և հմտությունները կնպաստեն նրանց աշխատանք գտնելուն և ինչու չէ ընտանիքում իրենց ապագա երեխաներին օգտակար լինելուն:

Ողջունում ենք Ձեր նախաձեռնությունը և հույս հայտնում, որ նմանօրինակ բարեգործական և օգտակար աշխատանքները կունենան շարունակություն, քանի որ դրա կարիքն ունեցողների թիվը շատ է:

Մենք միշտ պատրաստ ենք մեր լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել:

Ապագա ծրագրերի և հետագա համագործակցության ակնկալիքով և կանխավ շնորհակալությամբ `

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ